**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**
**ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**№ «ՇՄՆ-ԳՀ-ԱՇՁԲ-19/04»**

ք.Երևան «20» «09» 2019թ.

Շրջակա միջավայրի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի ժ/պ Վ.Ջիլավյանի, որը գործում նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ.Պետրոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել Պայմանագրի Հավելված №1-ով սահմանված Հայաստանի Հանրապետության Արարատի և Արմավիրի մարզերում խորքային հորերի լուծարման կամ կոնսերվացման աշխատանքները (այսուհետ՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված Աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2. Պայմանագրով նախատեսված Աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, նորմերին և կանոններին, ինչպես նաև Պայմանագրին համապատասխան:

1.3. Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 2019 թվականի դեկտեմբերի 20-ը:

## 2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1. Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով.

2.2. Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1 1. Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2. Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ գնման ժամանակացույցի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը

3.1.3. Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4. Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ գնման ժամանակացույցը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին կամ կատարել է անպատշաճ որակի աշխատանք,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները

3.1.5. Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում·

3.1.6. Լիազորել այլ անձի՝ ա շխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7. Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում·

**3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3 2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3 2.2. Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2 3. Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները.

**3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3 3.1. Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը.

3.3.2. Պատվիրատուի կողմից պայմանագրի 6.5 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը.

**3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4 1. Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2. Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3. Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.4. Պայմանագրի Հավելված №1-ով յուրաքանչյուր Աշխատանքի կատարման համար սահմանված ժամկետը խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6 2 կետով նախատեսված տույժը.

3.4.5. Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3 4.6. Աշխատանքի օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.7. Եթե Պայմանագրի Հավելված №1-ով յուրաքանչյուր Աշխատանքի արդյունքի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4 8. Պայմանագրով նախատեսված երաշխիքային ժամկետը հաշվարկվում է Պատվիրատուի կողմից յուրաքանչյուր Աշխատանքի ողջ ծավալով ընդունելու օրվան հաջորդող օրվանից. Յուրաքանչյուր Աշխատանքի արդյունքի երաշխիքային ժամկետներին ներկայացվող պահանջները սահմանված են Պայմանագրի Հավելված №1-ում: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին

## 4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված №2.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement am

հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (Հավելված №2). Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www procurement am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում): Կապալառուն կողմից հանձնման-ընդունման արձանագրության հետ միաժամանակ Պատվիրատուին է ներկայացնում «Լուծարվող հորատանցքի հաշվառման քարտը»՝ համաձայն Հավելված №3-ի: Սույն կետով նախատեսված պայմանի խախտումը համարվում է կատարված աշխատանքների ժամկետի խախտում:

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4 1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ.

4.4 Եթե Պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4 2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5. Աշխատանքի արդյունքը Պայմանագրի պահանջներին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6. Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի կողմից ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

2) Կապալառուի կողմից կատարված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ ընդունող հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

3) մինչև ավարտված աշխատանքների ընդունումը՝ ընդունող հանձնաժողովը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված աշխատանքները և կազմում ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է կատարված աշխատանքների համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունը,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև Պայմանագրի 4.6 կետի 4-րդ ենթակետով սահմանված կարգով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից·

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է մինչև **37 210 500 (երեսունյոթ միլիոն երկու հարյուր տասը հազար հինգ հարյուր)** ՀՀ դրամը՝ որից մինչև **6 201 750 (վեց միլիոն երկու հարյուր մեկ հազար յոթ հարյուր հիսուն)** ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը: Աշխատանքի կատարման հանրագումարային գինը կազմում է **502 020 (հինգ հարյուր երկու հազար քսան)** ՀՀ դրամը՝ որից մինչև **83 670 (ութսուներեք հազար վեց հարյուր յոթանասուն)** ՀՀ

դրամը՝ ԱԱՀ-ն: Աշխատանքի առավելագույն (նախահաշվային) միավորի գները սահմանված են Պայմանագրի Հավելված №1-ի ծավալաթերթում:

5.2. Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3. Պատվիրատուն վճարում է ըստ փաստացի կատարված աշխատանքների ծավալի՝ Պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի 8.13 կետով նախատեսված ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կնքված համաձայնագրով նախատեսվող վճարման ժամանակացույցով:

5.4. Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ **ՎԳ=ՄԳ/ՆԳxԱxՔ**, որտեղ՝

1) ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի աշխատանքի կատարման դիմաց վճարվող գումարն է.
2) ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.
3) ՆԳ-ն աշխատանքի կատարման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.
4) Ա-ն կատարված աշխատանքի առավելագույն միավորի գինն է.
5) Ք-ն կատարված աշխատանքի քանակն է:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և պայմանագրի Հավելված №1-ով յուրաքանչյուր Աշխատանքի կատարման համար սահմանված ժամկետի պահպանման համար:

6 2. Պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3 1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1 4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը Պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4. Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5. Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6. Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7. Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը. Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին.

[1] *Տուգանքը հաշվարկվում է Պայմանագրի 8 13 կետով նախատեսված ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կնքված համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սպանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը·

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է.

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է·

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8. Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից·

8.10. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով. Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11. Պայմանագիրը կազմված է 6 (վեց) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի Հավելվածներ №№1; 2, 2.1 և 3 համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12. Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13. Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է·

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| **Շրջակա միջավայրի նախարարություն** | **«ՎԱԼՄԼ» ՍՊԸ** |
| ք Երևան, Կառավարական 3-րդ շենք | ք.Արմավիր, Շահումյան փողոց 13/1 |
| ՖՆ գործառնական վարչություն | «Ինեկոբանկ» ՓԲԸ Արմավիր մ/ճ |
| ՀՀ 900011018646 | ՀՀ 205032202454 |
| ՀՎՀՀ 02507198 | ՀՎՀՀ 04421621 |
| Շրջակա միջավայրի նախարարության | «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ի |
| գլխավոր քարտուղարի ժ/պ | տնօրեն |
| Վ.Ջիլավյան | Վ.Պետրոսյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված №1
«20» «09» 2019թ. կնքված
«ՇՄՆ-ԳՀ-ԱՇՁԲ-19/04» ծածկագրով պայմանագրի

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Շրջակա միջավայրի նախարարության
գնահատող քարտուղարի ժ/պ
Ս.Ջիլավյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
«ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ի
տնօրեն
Վ.Պետրոսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ԵՎ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԵՐՈՒՄ ԽՈՐՔԱՅԻՆ ՀՈՐԵՐԻ ԼՈՒԾԱՐՄԱՆ ԿԱՄ ԿՈՆՍԵՐՎԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| Աշխատանքի | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | կատարման | |
| ՀՀ | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը | ընդհանուր քանակը | հասցեն | ժամկետը* |
| 1. | 45261161/1 | **Աշխատանքի նկարագիրը՝**<br>• Ապօրինի շահագործվող, ինքնաշատրվանող և բացասական մակարդակով հորատանցքերի խցակալում, ցեմենտախծուծում և լուծարում<br>• Ապօրինի շահագործվող, ինքնաշատրվանող և բացասական մակարդակով հորատանցքերի կոնսերվացում.<br>**Անհրաժեշտ պահանջները կամ պայմանները՝**<br>• Աշխատանքների իրականացումն ըստ «Հայջրնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից մշակված «Արարատյան դաշտավայրի խորքային հորերի լուծարման և կոնսերվացման եղանակների ու պահանջվող միջոցների» հաշվարկի (Երևան 2013, ՀՀ կառավարության N 1415-Ն որոշում, առ 19.12.2013թ.). Աշխատանքների կատարման միավոր գների ծավալաթերթը* կցվում է:<br>• Լուծարվող կամ կոնսերվացվող հորի հաշվառման քարտի կազմում.<br>• Կատարված աշխատանքների հաշվետվությունների ներկայացում·<br>**Աշխատանքի իրականցման վայրը՝**<br>• Հորի գտնվելու վայրի վերաբերյալ տվյալները տրամադրում է պատվիրատուն·<br>**Աշխատանքների կատարման ժամկետը՝**<br>• Պատվիրատուի կողմից ապօրինի շահագործվող, ինքնաշատրվանող և բացասական մակարդակով հորի գտնվելու վայրը Կապալառուին էլեկտրոնային կամ գրավոր եղանակով տրամադրվելուն հաջորդող աշխատանքային օրվանից հաշված մինչև հինգ աշխատանային օր.<br>**Կատարված աշխատանքի երաշխիքային ժամկետը՝**<br>• Պատվիրատուի կողմից յուրաքանչյուր աշխատանքի արդյունքն ողջ ծավալով ընդունելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օր: | դրամ | 37 210 500 | 1 | ՀՀ Արարատի և Արմավիրի մարզերի վարչական տարածքներում | մինչև 2019 թվականի դեկտեմբերի 15-ը |

** ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած*

# ԾԱՎԱԼԱԹԵՐԹ

## ՀՀ Արարատի և Արմավիրի մարզերում խորքային հորերի լուծարման կամ կոնսերվացման աշխատանքների

| հ/հ | Աշխատանքների տեխնիկական բնութագիրը | Չափի միավորը | Միավորի նախահաշվային գինը, ներառյալ ԱԱՀ (դրամ) |
|---|---|---|---|
| 1 | Հորատող հաստոցի հարթակի պատրաստում (հարթեցում, փոսորակների պատրաստում, խճի լցոնում) | հատ | 100000 |
| 2 | Հորատանցքի փողի մաքրում, հորատանցքի կառուցվածքի ճշգրտում հորատահաստոցով | մ | 27500 |
| 3. | Հորատանցքի մանրակոպճի լցոնում | մ³ | 10000 |
| 4. | Հորատանցքի կավային տամպոնաժ | մ³ | 6000 |
| 5 | Հորատանցքի ցեմենտային տամպոնաժ | մ³ | 50000 |
| 6. | Բետոնե պատյանի իրականացում խողովակի շուրջ | մ³ | 29860 |
| 7. | Բնահողի հանույթ խողովակի շուրջ ձեռքով | մ³ | 1740 |
| 8 | Հանված բնահողի հարթեցում տեղում | մ³ | 890 |
| 9. | Գոյություն ունեցող 200մմ պողպատե խողովակի կտրում | հատ | 6060 |
| 10. | Գոյություն ունեցող 300մմ պողպատե խողովակի կտրում | հատ | 8380 |
| 11 | Գոյություն ունեցող 400մմ պողպատե խողովակի կտրում | հատ | 11360 |
| 12. | 250*250*3 թերթապողպատե խցափակիչի եռակցում խողովակին | հատ | 9150 |
| 13. | 350*350*3 թերթապողպատե խցափակիչի եռակցում խողովակին | հատ | 11180 |
| 14. | 450*450*3 թերթապողպատե խցափակիչի եռակցում խողովակին | հատ | 14760 |
| 15. | Հորատանցքի կահավորում 200մմ փականով | հատ | 43000 |
| 16. | Հորատանցքի կահավորում 300մմ փականով | հատ | 85000 |
| 17. | Հորատանցքի կահավորում 400մմ փականով | հատ | 125000 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | | **539880** |

Հավելված №2
«20» «09» 2019թ. կնքված
«ՇՄՆ-ԳՀ-ԱՇՁԲ-19/04» ծածկագրով պայմանագրի

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
**Շրջակա միջավայրի նախարարության**
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք
ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011018646
ՀՎՀՀ 02507198

**ԿԱՏԱՐՈՂ**
**«ՎԱԼՄԼ» ՍՊԸ**
ք Արմավիր, Շահումյան փողոց 13/1
«Ինեկոբանկ» ՓԲԸ Արմավիր մ/ճ
ՀՀ 205032202454
ՀՎՀՀ 04421621

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«_____» «_____» 2019թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ***Պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիր***
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «20» «09» 2019 թ.
Պայմանագրի համարը՝ «ՇՄՆ-ԳՀ-ԱՇՁԲ-19/04»
Պատվիրատուն և Կապալառուն՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 2019թ. դուրս գրված № _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| N | Կատարված աշխատանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են·

Աշխատանքը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված №2.1
«20» «09» 2019թ. կնքված
«ՇՄՆ-ԳՀ-ԱՇՁԲ-19/04» ծածկագրով պայմանագրի

**ԱԿՏ №**

**պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ**

Սույնով արձանագրվում է, որ Շրջակա միջավայրի նախարարություն (այսուհետ՝ Պատվիրատու) և «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կապալառու) միջև «20» «09» 2019 թվականին կնքված № «ՇՄՆ-ԳՀ-ԱՇՁԲ-19/04» գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն «_____» «_____» 2019 թվականին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

**ԿՈՂՄԵՐԸ**

**Հանձնեց**

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված №3
«20» «09» 2019թ. կնքված
«ՇՄՆ-ԳՀ-ԱՇՁԲ-19/04» ծածկագրով պայմանագրի

# ԼՈՒԾԱՐՎՈՂ ՀՈՐԱՏԱՆՑՔԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՐՏ

1.Մարզ_____ գյուղ_____

տնտեսություն_____

2.Հորատանցքի հասցեն և նրա դիրքը ռելիեֆում _____

_____

_____

3.Աշխարհագրական կոորդինատները : X_____ Y_____ H_____

4.Հորատանցքի նշանակությունը և տեղեկություններ նրա օգտագործման մասին

_____

5.Հորատումն իրականացրած կազմակերպության անվանումը և հորատման տարեթիվը

_____

6.Երկրաբանական հաշվետվության կամ այլ փաստաթղթի անվանումն ու հեղինակը, պահպանման տեղը, որի հիման վրա կազմված է հաշվառման քարտը

_____

_____

_____

7.Հորատանցքի խորությունը մ._____

8.Հորատանցքի կառուցվածքը և սարքավորումները _____

_____

_____

_____

9.Ջրի ծախսը լ/վրկ, մակարդակի իջեցումը մ., ջրի տեսակարար ծախսը լ/վ/մ., լուծարման ժամանակը _____

_____

_____

_____

10. Երկրաբանական կտրվածքն ու տեղեկատվությունը ջրատվության մասին

| № | Ապարների լիթոլոգիական նկարագրությունը (ջրապարունակ ապարներն ընդգծել) | Երկրա-բանական ինդեքսը | Շերտի հզորությունը /մ/ | Շերտի հիմքի խորությունը | Ջրատար հորիզոնի կարգային համարը | Ջրի հայտնաբերման խորությունը | Ջրի կայուն (ստատիկ) մակարդակը /մ/ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Տեղադրման միջակայքը /մ/ | | |
| | | | | | | | |

11. Ջրի որակը ա) ֆիզիկական հատկությունները _____

_____

Քիմիական անալիզ

| Ջրատար հորիզոնի համարը և երկրաբանական ինդեքսը | Նմուշի վերցնման ժամկետը | Չոր մնացորդը մգ/լ | Ընդհանուր կոշտությունը մգ. համ/լ | Հիմնական քիմիական բաղադրիչները, մգ/լ | | | | | | Կուրլովի բանաձևը և լրացուցիչ տեղեկություններ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Նմուշի վերցնման խորությունը | | վերացվող կոշտությունը | CL- | $SO^2_4$- | $HCO_3$- | $Ca^{2+}$ | $Mg^{2+}$ | $Na^{+}+K^{+}$ | |
| | | | | | | | | | | |

12. Լրացուցիչ տեղեկություններ _____

_____

_____ _____

Քարտի լրացման ժամկետը «____» _____ 20 թ.

Հաշվառման քարտ լրացնող _____ _____

(պաշտոնը) (ազգանուն)

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ №1

## «20» սեպտեմբերի 2019թ. N ՇՄՆ-ԳՀ-ԱՇՁԲ-19/04 պայմանագրի

ք.Երևան «02» «10» 2019թ.

Շրջակա միջավայրի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի ժ/պ Վ.Ջիլավյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Պատվիրատու», մի կողմից, և «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ.Պետրոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Կապալառու», մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետ՝ «Կողմեր», ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով Կառավարության 2019 թվականի սեպտեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1515-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարությանը գումար հատկացնելու, մասին» N 1257-Ն որոշումը, ինչպես նաև կողմերի միջև 2019 թվականի սեպտեմբերի 20 -ին կնքված «ՇՄՆ-ԳՀ-ԱՇՁԲ-19/04» ծածկագրով պայմանագրի 8.5 և 8. 13 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

### 1. Համաձայնագրի առարկան

1.1. Կողմերը որոշեցին 2019 թվականի սեպտեմբերի 20-ին կնքված «ՇՄՆ-ԳՀ-ԱՇՁԲ-19/04» ծածկագրով պայմանագիրը լրացնել վճարման ժամանակացույց հավելվածով՝ համաձայն հավելվածի:

1.2. Պատվիրատուի վավերապայմաններում «900011018646» հաշվեհամարը փոխարինել «900011029098» հաշվեհամարով:

### 2. Այլ պայմաններ

2.1. Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, հայերեն լեզվով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Համաձայնագրի Հավելվածը համարվում է համաձայնագրի անբաժանելի մասը:

### 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| **Շրջակա միջավայրի նախարարություն** | **«ՎԱԼՄԼ» ՍՊԸ** |
| ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք | ք.Արմավիր, Շահումյան փողոց 13/1 |
| ՖՆ գործառնական վարչություն | «Ինեկոբանկ» ՓԲԸ Արմավիր մ/ճ |
| ՀՀ 900011029098 | ՀՀ 205032202454 |
| ՀՎՀՀ 02507198 | ՀՎՀՀ 04421621 |
| Շրջակա միջավայրի նախարարության | «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ի |
| գլխավոր քարտուղարի ժ/պ | տնօրեն |
| ***Վ.Ջիլավյան*** | ***Վ.Պետրոսյան*** |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.S. | Կ.S. |

1

Հավելված
«02» «10» 2019թ. կնքված
համաձայնագիր №1
№ ՇՄՆ-ԳՀ-ԱՇՁԲ-19/04 պայմանագրի

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
**Շրջակա միջավայրի նախարարության**
գլխավոր քարտուղարի ժ/պ
***Վ.Ջիլավյան***
(ստորագրություն)
**Կ.Տ.**

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
**«ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ի**
տնօրեն
***Վ.Պետրոսյան***
(ստորագրություն)
**Կ.Տ.**

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **հրավերով նախատեսված չափաբաժնի համարը** | **գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)** | **անվանումը** | **դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019 թվականին՝ այդ թվում (ըստ ամիսների աճողական կարգով)** | | | | | | | | | | | | |
| | | | **հունվար** | **փետրվար** | **մարտ** | **ապրիլ** | **մայիս** | **հունիս** | **հուլիս** | **օգոստոս** | **սեպտեմբեր** | **հոկտեմբեր** | **նոյեմբեր** | **դեկտեմբեր** | **Ընդամենը** |
| 1 | 45261161/1 | ՀՀ Արարատի և Արմավիրի մարզերում խորքային հորերի լուծարման կամ կոնսերվացման աշխատանքներ | - | - | - | - | - | - | - | - | - | 37 210 500 | 37 210 500 | 37 210 500 | **37 210 500** |

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

Շրջակա միջավայրի նախարարությունը ստորև ներկայացնում է իր կարիքների համար «ՀՀ Արարատի և Արմավիրի մարզերում խորքային հորերի լուծարման կամ կոնսերվացման աշխատանքների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՇՄՆ-ԳՀ-ԱՇՁԲ-19/04» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2019 թվականի սեպտեմբերի 20-ին կնքված «ՇՄՆ-ԳՀ-ԱՇՁԲ-19/04» ծածկագրով պայմանագրում 2019 թվականի հոկտեմբերի 02-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

| | |
|---|---|
| Փոփոխության պատճառ՝ | Գնումը կատարվել է ֆինանսական միջոցներ նախատեսվելու պայմանով, |
| Փոփոխության նկարագրություն՝ | Պայմանագիրը լրացվել է վճարման ժամանակացույց հավելվածով, |
| Փոփոխության հիմնավորում՝ | «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիմքով կնքված պայմանագիր: Պայմանագրի 8.5 և 8.13 կետեր: |
| Փոփոխության պատճառ՝ 2 | Պատվիրատուի վավերապայմանների փոփոխում, |
| Փոփոխության նկարագրություն՝ | Պատվիրատուի բանկային հաշվեհամարի փոփոխություն, |
| Փոփոխության հիմնավորում՝ | Պայմանագրի 8.5 և 8.13 կետ: |

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ **Լիլիթ Զոհրաբյանին**:

Հեռախոս՝ **(011) 818-514:**

Էլ. փոստ՝ **gnumner.mnp@yandex.ru:**

Պատվիրատու՝ **Շրջակա միջավայրի նախարարություն:**